Կանուկեան դէմ զօրակցութիւն» կոչուած կազմակերպութիւնը եւս դատաւարութեամբ էր Հայկական Ցեղասպանութեան իրողութիւնը ժխտող նիւթերու դասաւանդումին թափ տուող թուրքիոյ կրթութեան նախարարութեան նորագոյն որոշումը՝ միեւնոյն ժամանակ շեշտելով, թէ մինչեւ որոշումին սրբագրութիւնը պէտք է դադարեցնել թուրքիոյ կրթական ծրագրերը: Սակայն, որ նախապէս «թրքական դպրոցներու միլիոն եւրոյի օժանդակութիւնները:

«ՊՈՍԹԵՆ ԿԼՈՊ» ԿԸ ՀԱՍՏԱԵ ԳԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԻՐ ՈՐՈՇՈՒՄԸ

ԹՈՒՐԻՔԵՐ ԲՈՂՈՔԻ ԱՐՇԱԽԻ ՄԸ ԿԸ ԶԵՌՆԱՐԿԵՆ

Նախապէս հաղորդած էինք, որ ամերիկեան «Պոսթ-Կոնկրէս» հեղինակաւոր թերթը առկախած է Հայկական Ցեղասպանութեան ճանաչմանը: «Ցեղասպանութիւն» բառը չգործածելու իր որոշումը: Թրքական լրատուամիջոցները վերջերս անդադարձան այս հարցին:

Նախապէս, թրքական «Զաման» օրաթերթը իր 1 Օգոստոս թիւով հաղորդեց, թէ 31 Յունիսին ամերիկեան թերթի խմբագրութիւնը յայտնած է, որ վերջնականապէս կը ճանաչայ Հայկական Ցեղասպանութիւնը եւ այնուհետեւ գայն պիտի բնութագրէ «Ցեղասպանութիւն» բառով:

«Զաման»-ի համաձայն, Միացեալ Նահանգներու մէջ գործող թուրք-ամերիկեան կազմակերպութիւններու ղեղաչափերը կը զարգանան: «Պոսթ-Կոնկրէս»-ի որոշումին դէմ բողոքի արշախի մը ձեռնարկած է: Դաշնակցութեան նախագահ Քայալի Պոշուքթաշաման Միացեալ Նահանգներու մէջ բնակող թուրքերուն կոչ ուղղած է հեռաձայնի, Ֆաթսի եւ ե-նամակներու տարափի մը ենթարկել «Պոսթ-Կոնկրէս» խմբագիր Մալքը Լարգինը բողոքելով Հայկական Ցեղասպանութեան նկատմամբ թերթին որդեգրած նոր դիրքորոշումին դէմ:

Յանձնախումբը տեղեկացուց նաեւ, որ Միացեալ Նահանգներու մէջ թուրքիոյ դեպի անտառներու անմիջապէս հակադարձելով այս նամակին պաշտպա-

ՊԱՔՈՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋԱՍՏՈՒԹԻՆԸ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ

Հարաւային Կովկասի մէջ եւրոպական Միութեան յատուկ պատուիրակ Հէյքի Թալիթի վերջերս հանդիպում մը ունեցած է Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիրայէթ Կուլիբեի հետ: Ըստ «Ինթըրֆաքս» լրատու գործակալութեան, հանդիպումին ընթացքին Կուլիբե յայտնած է, թէ միջազգային հանրութիւնը՝ Եւրոպական Միութեան գլխաւորութեամբ, պէտք է յանձնարարէ թափէ դարաքաղեան տագնապի լուծման շրջանակներուն մէջ: Ան աւելցուցած է, թէ Եւրոպական Միութիւնը հարցի լուծման համապատասխան մեքանիզմներ ունի, հետեւաբար՝ պէտք է Ղարաբաղի ներկայ իրավիճակով բաւարարուի, այլ աւելի աշխուժ պէտք է ըլլայ խաղող լուծում մը գտնելու համար հարցին: Կուլիբե նաեւ յայտնած է, թէ գինացողարի «խախտումներն» ու հայ պաշտօնատարներուն «յարձակողապաշտ» մօտեցումը փորձեր են շրջանի ընկերային եւ քաղաքական վիճակը վատթարացնելու:

Թալիթի վեճի Կուլիբեին ետք հանդիպում մը ունեցած է նաեւ լրագրողներու հետ եւ արտաքին գործոց նախարարին հետ իր հանդիպումին ակնարկելով ըսած է, թէ ներկայիս Եւրոպական Միութիւնը ուղղակիորէն չի գրադիր Ղարաբաղեան տագնապի լուծման հարցով, այլ՝ անուղղակիորէն կ'աջակցի խաղողութեան գործընթացին: Ան աւելցուցած է, թէ ինք պարզապէս Եւրոպական Միութեան ներկայացուցչին է եւ Հարաւային Կովկաս գործուղուած է Եւրոպական Միութիւն:

Ազրպէյճան յարաբերութիւնները աւելի հաստատ հիմի վրայ դնելու առաջարկեց: Ան նշած է, թէ արդէն յանձնարար տեղեկութիւններ ստացած է տագնապի մասին ազերի պաշտօնատարներու հետ հանդիպելով, եւ խոստացած է բոլոր այդ տեղեկութիւնները փոխանցել Միութեան նախագահութեան:

Անդրադառնալով գինացողարի շուրջ Կուլիբեի յայտարարութեան, Թալիթի ըսած է, թէ այդ խախտումները կը միտին շրջանի կացութիւնը խախտել: Ան սազմանապի երկու կողմերուն ալ հանդարտելու եւ քաղաքական իրավիճակը շիտախելու կոչ ուղղած է: Աւելի ուշ, Թալիթի ըսած է հանդիպում մը ունեցած է

Ազրպէյճանի Միլի Մեճլիսի (խորհրդարան) նախագահ՝ Մուրթուզ Ալեքեբերովիի հետ: «Թրէնտ» լրատու գործակալութիւնը հանդիպումին գլխաւոր կէտերը փոխանցելով յայտնած է, թէ Ազրպէյճան երբեք պիտի չընդունի Ղարաբաղը անկախ եւ Ազրպէյճանէն անջատ պետութեան մը վերածելու միտումները: Ան նաեւ նշած է, թէ նշեալ հարցը ունի միայն մէկ լուծում, որ կը յարգէ միջազգային քաղաքականութեան չափանիշները, կը հիմնուի շրջանի կայունութեան եւ Ազրպէյճանի «օրինական» սահմաններուն պահպանման վրայ: Ալեքեբերով յայտարարած է նաեւ, թէ այդ լուծումը գտնելու ամէնէն առակ կազմակերպութիւնը Եւրոպական Միութիւնն է եւ Պաքոն մեծ յոյս ունի այս ուղղութեամբ Միութեան տարած աշխատանքներուն ուղղութեամբ:

Թալիթի իր կարգին նշած է, թէ ԵԱՀԿի Մինսքի խմբակի համանախագահին հետ հանդիպած է եւ այն եզրակացութեան հասած է, թէ միջազգային կազմակերպութիւնները մօտ ապագային իրենց ջանքերը մէկտեղելով պիտի փորձեն խաղող լուծում մը գտնել Լեռնային Ղարաբաղի հարցին:

ԹՈՒՐԻՔԵՐԸ ՔԱՐԻՒՅԻՂ ԿԸ ՓՆՏՈՒՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱՅ

«Փան Արմինիոն» լրատուական կայքը վերջերս հաղորդեց, թէ ըստ թրքական լրատուամիջոցներու, երկրորդական համանախագահ կը մեծան թուրքիոյ հիւսիսարեւելեան շրջաններուն մէջ մեծ քանակութեամբ հանքածուխի գոյութիւնը:

Աւելին, ըստ այդ լրատուամիջոցներուն, Հայաստանի սահմանամերձ կարծիքի Արփախայ շրջանին մէջ արդէն սկսած են քարիւղի փնտնութիւնը աշխատանքները: Նշեալ շրջանին մէջ տեղի կ'ունենան պիտումներ, որոնք պիտի տեսնեն մօտաւորապէս երեք ամիս: այս պիտումներուն համար տրամադրուած է մօտ վեց միլիոն տոլար...

7րդ Արուեստ



«ՏԸ ՃՐՈՒՆԻ»՝ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՏԱՐԱԾՔԻՆ

Յուրիսին կլենտեյլի մէջ սկսած եւ ամբողջ ամբողջ ընթացքին Միացեալ Նահանգներու հայաշատ այլ շրջաններու մէջ ընթացք առած է ցուցադրութիւնը հայկական նիւթով նոր ժապաւէնի մը՝ «ՏԸ ՃՐՈՒՆԻ»-ի (Ուղեւորութիւնը): 2002ի Միւլանի

նակին արժանացած ժապաւէնին բեմադրիչներն են Խոսեֆ Աւանէս եւ Էմիլ Յովհաննէսեան, որոնք հեղինակներն են նաեւ անոր բեմադրութեան: «ՏԸ ՃՐՈՒՆԻ» զգացական ուղեւորութիւնն է երիտասարդուհի մը, որ կը վերադառնայ դէպի իր

թեան վերադարձնալու սեմին: Կողմասեան եւ հայկական քաղաքական վերելքը մտնելով ու անակնկալներով լեցուն թատերաբեմը իրեն թերթի լուսանկարիչ մուտք կը գործէ 23 տարեկան իվ, որ տասը տարի առաջ հեռացած է իր հայրենիքէն եւ իր ընտանիքին հետ գաղթած՝ նիւ Եորք: Անցնող տարիներուն ան ուրիշներու նման ձգտած է հետապնդել ամերիկեան իր երազը եւ իրականացընել լուսանկարիչ դառնալու տենչը: Մինչ իվ կը մօտենայ իր նշանակէտին, անակնկալ պատահարներ գլխիվայր կը շրջեն կացութիւնը եւ ան ամերիկեան կեանքի աշխուժութեան ու հեւքին մէջ կը ձգտի իր հոգին հանգըստացնող կայունութեան: Իվ կ'իմանայ, թէ Հայաստանի մէջ սպաննուած է իր մանկութեան ընկերը՝ Արմանը: Անակնկալորէն ան կը ստանայ կողմասեան իրադարձութիւնները լուսանկարելու առաջարկ եւ կը նետուի իր կեանքին ընթացքը փոխող ուղեւորութեան մը մէջ: Չորսական մշակութային իր անցեալին վերադարձած իվ կը կլանուի Հայաստանի անկախացման շարժումով եւ ինքզինք կը գտնէ իր սիրած անձին կապուելու տաղանքներուն մէջ: Հերոսուհին հայրենիքը, մշակութիւնը եւ նոր կայքերը ճանչնալու ընթացքին միաժամանակ ճանաչման եզրեր կը գտնէ նաեւ իր անձին հետ:


Անգլերէն լեզուով եւ 100 վայրկեան տեւողութեամբ «ՏԸ ՃՐՈՒՆԻ»-ի դերասանական կազմը բաղկացած է մեծ մասամբ ամերիկահայ եւ հայաստանցի դերասաններէ, թէեւ ժապաւէնին մէջ դեր ստանձնած են նաեւ ամերիկացի դերասաններ: Ժապաւէնին նկարահանումները կատարուած են Քալիֆորնիոյ եւ Երեւանի մէջ: Իվի կերպարը մարմնաւորած է Սոնա Թաթոյեան, որուն կողքին ժապաւէնին մէջ կ'երեւին Վարդուհի Վարդբեան, Տիգրան Ներսիսեան, Անուշ Ստեփանեան եւ ուրիշներ: «ՏԸ ՃՐՈՒՆԻ»-ի արտադրիչ ընկերութիւնն է ժապաւէնին հիմնականներուն կողմէ հիմնադրուած «Ճէյ. Էֆ. Փորտաբշտի»:

Ժապաւէնին բեմադրիչներն են Խոսեֆ Աւանէս եւ Էմիլ Յովհաննէսեան, որոնք հեղինակներն են նաեւ անոր բեմադրութեան: «ՏԸ ՃՐՈՒՆԻ» զգացական ուղեւորութիւնն է երիտասարդուհի մը, որ կը վերադառնայ դէպի իր թեան վերադարձնալու սեմին: Կողմասեան եւ հայկական քաղաքական վերելքը մտնելով ու անակնկալներով լեցուն թատերաբեմը իրեն թերթի լուսանկարիչ մուտք կը գործէ 23 տարեկան իվ, որ տասը տարի առաջ հեռացած է իր հայրենիքէն եւ իր ընտանիքին հետ գաղթած՝ նիւ Եորք: Անցնող տարիներուն ան ուրիշներու նման ձգտած է հետապնդել ամերիկեան իր երազը եւ իրականացընել լուսանկարիչ դառնալու տենչը: Մինչ իվ կը մօտենայ իր նշանակէտին, անակնկալ պատահարներ գլխիվայր կը շրջեն կացութիւնը եւ ան ամերիկեան կեանքի աշխուժութեան ու հեւքին մէջ կը ձգտի իր հոգին հանգըստացնող կայունութեան: Իվ կ'իմանայ, թէ Հայաստանի մէջ սպաննուած է իր մանկութեան ընկերը՝ Արմանը: Անակնկալորէն ան կը ստանայ կողմասեան իրադարձութիւնները լուսանկարելու առաջարկ եւ կը նետուի իր կեանքին ընթացքը փոխող ուղեւորութեան մը մէջ: Չորսական մշակութային իր անցեալին վերադարձած իվ կը կլանուի Հայաստանի անկախացման շարժումով եւ ինքզինք կը գտնէ իր սիրած անձին կապուելու տաղանքներուն մէջ: Հերոսուհին հայրենիքը, մշակութիւնը եւ նոր կայքերը ճանչնալու ընթացքին միաժամանակ ճանաչման եզրեր կը գտնէ նաեւ իր անձին հետ:

«ՏԸ ՃՐՈՒՆԻ» ժապաւէնին որմագրը

եղող «Ճամփ» եւ «Անին-վայթը» ժապաւէններու մասնակցութեան:

«ՏԸ ՃՐՈՒՆԻ»-ի իրականացման ետին էտուրն Աւանէսի եւ Էմիլ Յովհաննէսեանի գեղարուեստական բեկողքին կը կանգնի Անթելա



«ՏԸ ՃՐՈՒՆԻ» ժապաւէնին որմագրը

Զոհրապեան, որ ձեւաւորած է ժապաւէնին արտադրութիւնը: Ան նախապէս աշխատած է «Էպսինթ» ժապաւէնին գրայ, իրեն արտադրիչ եւ էմիլ Յովհաննէսեանի գեղարուեստական բեկողքին կը կանգնի Անթելա

ՊՈՊԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ «ՄՈՍԹ» ԺԱՊԱԻԷՆԸ՝ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ



«Մոսթ» ժապաւէնին որմագրը

Յունիսին Հաուայի մէջ տեղի ունեցած Մաուիի Շարժապատկերի փառատօնին լաւագոյն կարծ ժապաւէնի եւ լաւագոյն նոր բեմադրիչի մրցանակներուն տիրացած է ամերիկահայ բեմադրիչ Պոպի Կարապետեան: Անոր առաջին գործը՝ «Մոսթ», որ առաջին անգամ ցուցադրուած էր 2003ի Յունուարին տեղի ունեցած ամերիկեան Մանտրեն Ֆիլմ Ֆեսթիվալին, 29 վայրկեան տեւողութեամբ ժապաւէն մըն է:

Փրակայի մէջ նկարահանուած «Մոսթ»-ի դերասանական կազմին մաս կը կազմեն մեծ թիւով չէի դերասաններ: «Մոսթ»-ի բեմադրութիւնը կը պատկանի Պոպի Կարապետեանի եւ Ուիլիամ Ջապապի: Այս վերջինը նաեւ մէկն է ժապաւէնին արտադրիչներէն:

«Մոսթ» բանաստեղծական ոճով ներկայացուած պատմութիւնն է հայրական սիրոյ եւ աշխատանքի միջեւ կորուստի հոր մը: Դիպաւորը ցոյց կու տայ, թէ շողեկառաքի կամուրջներ նորոգող հերոսը ինչպէս կ'անդրադառնայ, որ իր նորոգած կամուրջը ամէնէն մեծն ու կարեւորն է:

Գեղեցիկ եւ պարզ կառուցով օժտուած «Մոսթ» վերադարձնող մրցանակներուն արժանացած է շնորհիւ ժապաւէնին արտադրողականութեան, խորք ունեցող նիւթին եւ գեղարուեստական արժէքին:

Նոր ժապաւէններ




«ՏԸ ՀԱՄՔ» Բեմադրիչ Անի Լի

Երիզուր գծանկարներու «Մարվըլ» գիրքերուն մէկ այլ հերոսն է, որ այս ժապաւէնով կը բարձրանայ մեծ պաստառ: Կառավարութեան կողմէ կասկածելի նկատուած տարրալուծարանի մը ծիցաւոր մէկ ճարտարապետը փորձարկումներու պահուել կը դառնայ սխալ մը գոհը: Պրուս Պէնը (Էրիք Պան) զգացական ճշմունքներու եւ գայրոյթի պահերուն կը կերպարանափոխուի կանգնած ձգախեղեմ հսկայի մը, որ ընթացք կու տայ վայրագութեան իր ներքին մղումներուն: Ժապաւէնին դեպքերուն ընթացքը ցոյց կու տայ, թէ Պրուս իր ծննդեան առաջ իսկ գոհ գացած է իր հոր ծիցաւոր փորձարկումներուն: Պրուսի ներմղուած զգացումները ի յայտ կու գան, երբ անոր հայրը (Նիք Նուրթի) բանտէն կ'արձակուի եւ կը փորձէ աշխարհին տիրելու իր ձգտումները իրականացնել իր հսկայ գաւազին միջոցով: Մինչ Պրուս կը գտնուի իր հոր եւ երկրին զինուորական իշխանութիւններուն ստեղծած անելիք մէջ, զինք միակ հասկցող ու իրեն օգնութեան հասնողը կը հանդիսանայ իր բարեկամուհին (Ճենիֆըր Բոնեյլի):

Երկու նշանուոր դերասաններ ի մի խմբող, սակայն անոնց ներկայութիւնը բաւականաչափ չարդարացնող ժապաւէն մըն է «ՏԸ Համք», որ րացի իր հսկային կանգնած գոյնէն, շատ քիչ նորութիւն ունի տալիք գիտաբեւեակայական էջը: Ժապաւէններու նարտարարութիւնը: Ասով հանդիւր, ժապաւէնը պարարտ հող պատրաստած է իր անխուսափելի երկրորդ մասին:

«ՎԻՈՒ ՖՐԱՄ ՏԸ ԹՈՓ» Բեմադրիչ Պրուս Պարեթթո



Թեթե կատակերգական այս ժապաւէնին մէջ կու ինքիք Փալթո ստանձնած է օգանաւի յաջող հիւրընկալուհի մը ըլլալու ձգտող երիտասարդուհի մը դերը: Անոր կ'ընկերակցի նոյն երազ ունեցող, սակայն խարախ միջոցներով հոն հասնելու միջոցներ որոնող Քրիսթինա Էվըրէյթ: Շատ կանխատեսելի ընթացքով, յատկանշական նորութիւններէ գուրկ, սակայն գլխաւոր երկու դերասանուհիներու ներկայութեան անուշագոյն չափով օգտուող այս ժապաւէնը կը մրցի հանելիք ժամանակ մը ոչ անելիք: Նշենք, որ իբրեւ կատակերգութիւն, «Վիու ֆրամ տեթոֆ» մեծապէս կ'օգտուի նաեւ օգանաւի հիւրընկալուհիներու արտառոց մարգիչի դերը ստանձնած Մայք Մայքըրի ներկայութեան:

«Է ՄԵՆ ԸՓԱՐԹ» Բեմադրիչ Ֆ. Կերի Կրէյ

Թմբեցուցիչներու մաքսանց գութեան եւ տարածումին դեմ պայքարող ամերիկեան կառույցի մը անդամ Շան Վեթթըր (Վէն Տիգըլ) եւ իր գործընկերը իրենց արկածախնդրական աշխատանքը կը շարունակեն Քալիֆորնիա-Մեքսիքո սահմանին վրայ: Անոնց գլխաւոր թիրախն է քմբեցուցիչի մաքսային գորպետը, որուն պատճառով կը սպանուի գլխաւոր հերոսին կից: Այս դեպքը ժապաւէնին կու տայ նաեւ վրէժնոցի պատճառներով թման: Սովորական էջը ժապաւէն մը, որ կրցայ հպարտանալ միայն նոր յայտնուած աստղին՝ Վէն Տիգըլի ներկայութեամբ: «Է մէն ըփարթ»-ի մէջ դեր ստանձնած են նաեւ Ճիմ Պոթը, Քէն Դաւիթեան եւ Էլիս Էմբըր:

Ժապաւէնին բեմադրիչներն՝ Էտուրն Աւանէս

Շարժապատկերի Միջազգային փառատօնին «Միջազգային յայտագիր»-ին իրեն մէջ ցուցադրուած է Հանդիսատեսի մրցաարմատները:

1991ին, Խորհրդային Միութեան փլուզման օրերուն Հայաստանը կը գտնուի իր անկախութեան արմատները:

ԱՐՑԱԽԵԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ՝ «ՊԱՏԵՐԱԶՄ» ԺԱՊԱԻԷՆՈՎ

Արցախեան ազատագրական պայքարը եօթներորդ արևոստի միջոցով արտայայտելու ձգտող ժապաւէնի մը բեմադրութեան աշխատանքը պիտի սկսի Հայաստանի մէջ՝ հայրենի բեմադրիչ Գոռ Վարդանեանի նախաձեռնութեամբ:

«Չորսական օրէնք», «Ընտրութիւն» եւ «Խաւարման գիշեր» պատերազմական բնոյթի ժապաւէններու հեղինակ Գոռ Վարդանեանի այս ժապաւէնը «ցոյց պիտի տայ ճշմարտութիւնը շարարողեան պատերազմին, որ ընդհանրապէս ճիշդ ձեւով չի մեկնաբանուել օտարներու կողմէ»:

«Պատերազմ» խորագրեալ այս ժապաւէնը պիտի ներկայացնէ 1987-1991 թուականներուն Արցախի մէջ տեղի ունեցած ազատագրական պայքարին զինուորական գործողութիւնները:

Ժապաւէնը, որուն տեւողութիւնը պիտի ըլլայ երկուրորդէն օր, պիտի նկարահանուի Արցախի մէջ: Անոր տրամադրութիւնը շուրջ երկու միլիոն տղարի գումարը պիտի յատկացնեն հայաստանեան եւ օտար կազմակերպութիւնները:

Գոռ Վարդանեանի մտադրացումը եղող այս ժապաւէնը պիտի բեմադրի Վահէ Նաչատրեան, իսկ գլխաւոր դերով հանդէս պիտի գայ ժապաւէնին հեղինակը: Դերասանական կազմը պիտի ընդգրկէ հայ եւ օտար արւեստագէտներ:

- «ՏԸ ՀԱՄՔ» (Ամփի / Տիւն, Սոֆի, Սեթ Էլի, Սոսեր, Ֆրիւի, Սթալտ 2001, Լաւ Սալինա, Կալաքսի, Սթարկէյթ, Զապիթ)
- «ՎԻՈՒ ՖՐԱՄ ՏԸ ԹՈՓ» (Փլանք/Չուք, Ապրաթ, Զոնքորտ, Թրիփոլի)
- «Է ՄԵՆ ԸՓԱՐԹ» (Փլանք/Չուք, Ապրաթ, Զոնքորտ, Թրիփոլի)
- «ՓԱՅՐՈՅ ԱՅ ՏԸ ԸԵՐԻՊԻՈՒՆԸ» (Փլանք/Ապրաթ, Չուք, Զապիթ, Զոնքորտ, Թրիփոլի, Սթարկէյթ)
- «ՏԱՍՊ ԵՆ ՏԱՄՈՐԸՐ» (Ամփի / Տիւն, Եսփա, Սոսեր, Ֆրիւի, Լաւ Սալինա, Կալաքսի)
- «ԻՔՆԻԼԻՊԻՈՒՆԸ» (Փլանք / Ապրաթ, Զոնքորտ, Չուք, Թրիփոլի)
- «ԹԵՐՄԻՆԵՅՈՒՆ 3. ՈԱՅՁ ԱՅ ՏԸ ՍԵՐԻՆԸ» (Ամփի/Տիւն, Եսփա, Սոֆի, Սեթ Էլի, Սոսեր, Սթալտ 2001, Լաւ Սալինա, Կալաքսի, Ֆրիւի, Սթարկէյթ)
- «ՏԸ ԹՈՒՐԸ ԸՊԱՌԹ ՉԱՐԼԻ» (Փլանք, Զոնքորտ, Զապիթ)
- «ՓԻԿԵԹՅ ՊԻԿ ՍՈՒՎԻ» (Փլանք / Ապրաթ, Զոնքորտ, Չուք, Ֆրիւի, Թրիփոլի)
- «ՊՐՈՒՍ ՕԼՍԱՅԹ» (Փլանք/Ապրաթ, Զոնքորտ, Թրիփոլի, Չուք, Սթարկէյթ)
- «2 ՏԱՍՁ ԵՆ 2 ՖԻՐԻՈՒՆ» (Ամփի / Տիւն, Սոսեր, Սթալտ 2001, Լաւ Սալինա, Կալաքսի, Ֆրիւի)
- «ԸՆԻՖԻՏԵՆ» (Ամփի / Եսփա, Սթալտ 2001)
- «ՏԸ ՈՒՅՆՆ ԹՈՒՐԸՐԻՆԸ» (Փլանք/Ապրաթ, Չուք, Զոնքորտ, Ֆրիւի, Թրիփոլի)
- «ՉԱՐԼԻՉ ԵՅՆՈՒՆ» (Ամփի, Եսփա, Սեթ Էլի, Սոսեր, Սթալտ 2001, Կալաքսի, Ֆրիւի)
- «ԼԻՉԻՍ ԵՐԱՅՈՒՆՍԵՐ ՍՈՒՎԻ» (Փլանք/ Ապրաթ, Չուք, Զոնքորտ, Թրիփոլի)
- «ՏԸ ԸՈՐ» (Փլանք/Չուք, Ապրաթ, Զոնքորտ, Ֆրիւի, Թրիփոլի)
- «ՏԵՅ» (Փլանք/Չուք, Ապրաթ, Զոնքորտ)
- «ՃՈՒՆ ԻՆԿԼԻՉ» (Փլանք/Զոնքորտ, Ամպաստ, Ապրաթ)
- «ԵՆԿԸՐ ՍԵՆԵՅՍԸՆԸ» (Ամփի/Եսփա, Սոսեր, Սթալտ 2001)
- «ՏԸ ՄԵՅԹՐԻՍ ՈՒՆՈՍԸ» (Ամփի/ Կալաքսի)
- «ՏԱՌ ԹՈՒ ԼՈՒՉ Ե ԿԱՅ ԻՆ ԹԵՆ ՏԵՅՁ» (Փլանք / Ապրաթ, Զոնքորտ, Ամպաստ)

Գ. Գեղեցիկ
••••• Գերագոյն ••••• Շատ լաւ ••••• Լաւ ••••• Միջակ
••••• Չեն յանձնարարելի ••••• Չեն դիտած

Եւրոպայի ԱՄՆԱԿԵՐԻ ՄՐԱՀՆԵՐՈՒՆ ԸՆԹԱՁԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ
Էսփա. 09/212516 - Սոսեր. 01/616707 - Տիւն. 01/792123 -
Սոֆի. 01/328806 - Ֆրիւի. 01/738439 - Ապրաթ. 09/226010
Ֆրիւի. 01/485590 - Ապրաթ. 01/292192 - Ֆրիւի. 09/912503 - Չուք. 09/221363
Սթարկէյթ. 08/813901 - Սեթ Էլի. 04/406706, Թրիփոլի. 06/442471:

Նորություններ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԿԸ ԶԳԱՆ
11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՑՆՑՈՒՄՆԵՐԸ

«ՏԸ ՆԻՒ ԵՈՐԶ ԹԱՅՄԱ» ԿԸ ԳՐԵ ԱՐՈՒԵՍՏԻ ՍԻԶԱԶԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԱՆԴԵՍՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԴՈՒՆԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՓՈՒՆ ԱՆՈՒՄԸ ԻՐԵՐԸ ԱՄԲԵԿԿՈՒԹԵԱՆ ԴԵՍ ԱՊԱՇՏԱԿՈՒՄԵԼՈՒ ՍՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ահաբեկչական արարքներու առթած վախը կը բարդացնէ փոխ առնուած արուեստի գործերով միջազգային փարթիւնի ցուցահանդէսներու կազմակերպումը, ինչ որ երկար ժամանակէ ի վեր թանգարաններու եկամուտ ապահովելու գլխաւոր միջոցն էր: Դժուարութիւնը առկայ է մանաւանդ Նիւ Եորքի նման վայրերու մէջ, որոնք ահաբեկչական յարձակումներու գլխաւոր թիրախը կը նկատուին:

Եւրոպական հաստատութիւններ 11 Սեպտեմբեր 2001էն ի վեր չեն փափաքիր իրենց թանկարժէք արուեստի գործերը փոխ տալ Նիւ Եորքի թանգարաններուն, երբ ապահովական նոր միջոցառումներ չեն որոշուած, եւ երբ արուեստի գործերը չեն ապահովագրուիր ահաբեկչութեան դէմ:

Արուեստի Մեթրոփոլիթըն թանգարանին եւ Նիւ Եորքի Արդի Արուեստի թանգարանին նման հաստատութիւններու կողմէ փոխ առնուած արուեստի գործերու ապահովագրութեան ծախսերը այնքան բարձրացած են, որ կը սպառնան խախտել անոնց պիւտճէները: Աւելին՝ մեծ թանգարաններ հետզհետէ նուազ թիւով հովանաւորներ կը բարեն եւ կը դիմագրուեն նիւթական պետական օժանդակութեան կրճատումներ:

«Արուեստի գործերու արժէքին բարձրացումը, ինչպէս նաեւ ապահովագրութեան գիներուն մագլցումը արգելք կը հանդիսանան մեծ ցուցահանդէսներու կազմակերպումին», - կ'ըսէ Սոլոմոն Կոկլէնճայ մթնագրարանին արուեստի գործերուն գլխաւոր պատասխանատունը: «Ասոր վրայ կ'աւելնայ այցելուներու թիւին նուազումը, որ Սեպտեմբեր 11ի դէպքերուն ամէնէն լուրջ անդրադարձներէն է»:

Այս մտահոգութիւնները միայն թանգարաններու պատասխանատուներու յատուկ չեն: Հաւաքածոյ պահողներ եւս մտաւախութիւններ ունին: Ումանք կը շեշտեն, թէ թանգարաններ պէտք է յաւելնալ ապահովագրութիւն առաջարկէին, որպէսզի իրենք համարձակին իրենց հաւաքածոներէն բազմամիլիոն տոլար արժողութեամբ գործեր փոխ տալ: Ուրիշներ, ինչպէս Լաս Վեկասի մէջ բախտախաղի կեդրոնի մը սեփականատէրը՝ Սթիֆըն Ուայն, պարզապէս կը մերժեն իրենց պատկանող գործերը փոխ տալ, ըսելով, թէ թանգարաններ ըստարար պատասխանատուութիւն չեն ստանձներ:

Մեթրոփոլիթըն թանգարանին եւ Նիւ Եորքի Արդի Արուեստի թանգարանին տնօրէնները յատկանշական շարք մը ցուցահանդէսներու ճակատագիրով մտահոգ՝ այս տարուան սկիզբը շաբաթ փարթիւնի ցուցահանդէս, բանակցելու համար թանգարանի պատասխանատուներու հետ, որոնք կը սպառնային ջնջել արուեստի գործեր փոխ տալու պայմանագրութիւններ՝ Նիւ Եորքի մէջ նախատեսուած կարեւոր ցուցահանդէսներու համար: Անոնց շարքին էին «Մաթիս-Փիքասո», «Լէոնարտո տա Վինչի» սեւագրութեան վարպետը» եւ «Մանէ - Վելազքէզ. սպանական գեղանկարչութեան ճաշակ մը» վերնագիրով ցուցահանդէսները:

Լուվրի, Փիքասոյի թանգարանին եւ Սանթըր Փոմփիտուի նման արուեստի հաստատութիւններու հետ երկարատեւ բանակցութիւններէ ետք, Նիւ Եորքի թանգարաններուն տնօրէնները յոտանաւ են ահաբեկչութեան եւ հրկիզումի դէմ ապահովագրութեան յաւելնալ գումարներ վճարել: Անոնք նաեւ ըսած են, թէ ապահովական յաւելնալ միջոցառումներ որոշուած են:

Լէոնարտո տա Վինչիի ցուցահանդէսին համար Լուվրի թանգարանը Մեթրոփոլիթըն թանգարանին փոխ տուած է 32 գծանկար: Այլ գործեր բերուած են Գերմանիայէն, Իտալիայէն, Անգլիայէն եւ Հունգարիայէն:

«Մաթիս-Փիքասո» ցուցահանդէսին 133 գործերէն 33ը կու գան Սանթըր Փոմփիտուէն եւ Փիքասոյի թանգարանէն, իսկ 27ը՝ Նիւ Եորքի Արդի Արուեստի թանգարանէն:


Փարիզի ազգային թանգարաններուն մէջ կայացող ցուցահանդէսներուն ընդհանուր պատասխանատուն կ'ըսէ, թէ «վտանգաւոր արկածներու թիւնը» կրնայ ըլլալ արուեստի գործեր Նիւ Եորքի թանգարաններուն տրամադրելը: «Նման պայմանագրութիւններ չենք կնքեր որքան թանգարանի հետ: Սակայն այնքան յաճախ փոխանակումներ կը կատարենք Մեթրոփոլիթընի եւ Արդի Արուեստի թանգարանին հետ, որ որոշեցնիք ընդառաջ»:

Երեւոյթը հրատապ հարց է իւրաքանչիւր թանգարանի համար:

Աշխարհի Առեւտուրի Կեդրոնին եւ անոր շրջակային մէջ Սեպտեմբեր 11ին կորսուած արուեստի գործերը կը գնահատուին 10 միլիոն տոլարով: Անոնց շարքին են Ֆայտերի, Նեւրլընի, Միտչիի եւ Լիթլթընի թանկանի նման 20րդ դարու վարպետներու գործեր, ինչպէս նաեւ զանազան ընկերութիւններու սեփական հաւաքածոներ: Հետեւաբար եւրոպական հաստատութիւններ եւ հաւաքածոյ պահողներ հանգիստ չեն գալար:

Սեպտեմբեր 11էն ետք ապահովագրութեան գինը կարգ մը պարագաներու աւելցած է 500 առ հարիւր համեմատութեամբ: Բազմաթիւ թանգարաններ այն մտաւախութիւնը ունին, որ երբեք պիտի վճարեն իրենց փոխ առած գործերը ապահովագրելու հարձակութեան դէմ:

Ուայն կ'ըսէ, թէ ապահովագրութեան բաւարար չէ, եւ ինք այդ պատճառով չէ, որ մերժած է Փիքասոյի 1932ի մէկ դիմանկարը փոխ տալ Լոնտոնի Թէյթ Մատրըն պատկերասրահին, Փարիզի Կրանտ Փալատին եւ Նիւ Եորքի Արդի Արուեստի թանգարանին:



Լաս Վեկասի մէջ բախտախաղի կեդրոնի մը սեփականատէրը՝ Սթիֆըն Ուայն կը մերժէ «Տը տրիմ» գեղանկարը փոխ տալ Նիւ Եորքի Արդի Արուեստի թանգարանին: Ան Փիքասոյի գործը երեք տարի առաջ գնած էր 42 միլիոն տոլարի:

Սակայն Նիւ Եորքի Արդի Արուեստի թանգարանը այնքան լաւատես էր, թէ Ուայն պիտի ընդառաջէր, որ դիմանկարը տպած էր «Մաթիս-Փիքասո» ցուցահանդէսին պատկերազրոյթին կողքին վրայ: Անիկա ժխտական վերջնական պատասխան ստանալէն ետք ստիպուած՝ նոր կողք մը տպած էր:

«Շատ վախցայ, - կ'ըսէ Ուայն: - Բազմաթիւ բաց կէտեր կան ապահովագրութեան համաձայնութիւններուն մէջ: Իսկ ինձի համար այս գեղանկարը անփոխարինելի է: Ոչ մէկ գեղանկար կը նմանի անոր»: Ուայն «Տը տրիմ» (երացը) դիմանկարը դնած էր երկու տարի առաջ, 42 միլիոն տոլարով: Անիկա կը պատկերէ Փիքասոյի սիրուհիներէն Մարի Թերեզը Ուուիթը՝ բազմաթիւ մը վրայ պատկած:

Գեղանկարը Փիքասոյի ամէնէն փառաբանուած գործերէն է: Անիկա «Մաթիս-Փիքասո» ցուցահանդէսին ետ քաշուած միակ գեղանկարն է: Դիւրին չէ հաւաքածոյ պահողները համոզել, թէ իրենց գեղանկարները ապահով պայմաններ

րու մէջ պիտի ցուցադրուին: Ուաշինկթընի Արուեստի Ազգային Պատկերասրահին տնօրէնը կ'ըսէ, որ թէեւ ոչ ոք մերժած է գործ տրամադրել՝ իր կազմակերպած էտուարտ Վիլարի յետահայեց ցուցահանդէսին համար, «սակայն երեւոյթը իր անդրադարձը պիտի ունենայ ապագայի ցուցահանդէսներուն վրայ: Ահաբեկչութիւնը միակ պատճառ չէ ապահովագրութեան սղուծեան: Արուեստի գործերու արժէքը եւս բարձրացած է», կ'ըսէ ան:

Նախագահ Ճորճ Պուշ անցեալ Նոյեմբերին ստորագրած էր ահաբեկչութեան դէմ ապահովագրութեան օրէնք մը, որ կ'ըսէր, թէ որեւէ ապահովագրութիւն ինքնաբերաբար կ'ընդգրկէ նաեւ ահաբեկչութեան դէմ գին մը: Սակայն ապահովագրական ընկերութիւններ կ'ըսեն, թէ գիններու որեւէ ուղեցոյց չէ ճշգրտած:

Անցեալին Միացեալ Նահանգներու մէջ թանգարաններ կ'ապաւինէին պետութեան կողմէ տրամադրուած գումարներու: Սակայն ցուցահանդէսներու առիթով արուեստի գործերու ապահովագրութեան համար սահմանուած տարեկան 5 միլիոն տոլարի պիւտճէն, որ կ'ընդգրկէր նաեւ ահաբեկչութեան դէմ ապահովագրութիւնը, արդէն սպառեցաւ 2003ի առաջին 6 ամիսներուն, բազմաթիւ դիմումներու պատճառով:

Պետական այս ծրագիրին պատասխանատուն կ'ըսէ, թէ այժմ ճիշդ կը թափէ, որ ապահովագրութեան համար տրամադրուած տարեկան 5 միլիոն տոլարի պիւտճէն բարձրացնէ 8 միլիոն տոլարի, եւ իւրաքանչիւր ցուցահանդէսի համար տրամադրէ 750 միլիոն տոլար, փոխան՝ 500 միլիոն տոլարի:

Պոսթընի Գեղեցիկ Արուեստներու թանգարանը Ֆրանսական կարգ մը թանգարաններէ խնդրած է գեղանկարներ՝ իր «Կոկէն Թահիթիի մէջ» ցուցահանդէսին համար, որ տեղի պիտի ունենայ 2004ի Փետրուարին: Ֆրանսական թանգարաններու պատասխանատուները վստահ չեն, որ պիտի ընդառաջեն:

Փարիզի մէջ թանգարանի մը պատասխանատուն մտահոգիչ կը նկատէ վիճակը: «Մաթիս-Փիքասո» եւ «Մանէ Վելազքէզ» ցուցահանդէսներուն պարագային, - կ'ըսէ ան, - եւրոպական թանգարաններ արդէն պայմանագրութիւններ կնքած էին եւ չէին կրնար հրաժարիլ: Սակայն ապահովագրական մտաւախութիւնները վստահաբար փոփոխութիւններ պիտի յառաջացնեն ապագային»:

ԱՐՈՒԵՍՏԻ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ
ԿԸ ԿՐՃԱՏՈՒՄ

ՍԻԱՅԵԱՆՆԵՐԸ ԱՆԱԿՈՒՆԵՐՈՒ ՄԵՋ ԱՐՈՒԵՍՏՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԿԸ ՆՈՒԱՋԻՆ «ԱՂԵՏԱԼԻ»
ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ» ԿԸ ԳՐԵ.

Արուեստի այն կազմակերպութիւնները, որոնք պետական նպաստ կը ստանան Միացեալ Նահանգներու տարածքին, մինչեւ 100 միլիոն տոլարի կրճատումներ կը դիմագրուեն այս տարի: Աւելի քան 10 տարիէ ի վեր Ամերիկայի պետութիւնը յաւելնալ գումարներ կը յատկացնէր արուեստներու: Սակայն Ամերիկայի Արուեստներու Պետական Ներկայացուցիչներու Ազգային Համագործակցութեան կողմէր իրենց ջոշնաթըն Քացի համաձայն, կրճատումները արդէնք են «պետական պիւտճէներու ազգային տագնապի» մը: «Կարգ մը նահանգներու մէջ արուեստներու կատարուած պետական նպաստին կրճատումը աղէտալի հետեւանքներ պիտի ունենայ», կ'ըսէ ան:

Վերջին 12 ամիսներուն ընթացքին 42 նահանգներ կրճատած են արուեստներու իրենց յատկացումները, ջնջելով տրամադրելի գումարներուն 13 առ հարիւրը:

Սակայն արուեստի կազմակերպութիւններ կը պարտաստուին ակելի դժուար տարի մը դիմագրուելու:

Նիւ Ճորճիի եւ Արիզոնայի մէջ առաջարկուած է յաւելնալ տարի որքան պիւտճէ չսահմանել արուեստներու համար: Այլ նահանգներու մէջ, ինչպէս՝ Միսուրի, Միչիգան, Քալիֆորնիա եւ Քոլորադո, կը մտածուի 15 առ հարիւրէն 75 առ հարիւրի կրճատումներ կատարել: Յարզ արուեստի տարբեր բնագիտական տարեկան 354 միլիոն տոլարի նպաստ կը ստանան մեթրոփոլիտան արարքի նահանգներու մէջ: Միացեալ Նահանգներու դաշնակցային պետութիւնը տարեկան յաւելնալ 116 միլիոն տոլար կը յատկացնէր (Բրիտանիոյ մէջ արուեստներու յատկացումը պետական պիւտճէն շուրջ 210 միլիոն տոլար է):

Նիւ Եորքի մէջ, ուր որեւէ այլ նահանգէ աւելի հանրային գումարներ կը ծախսուին արուեստներու վրայ, կառավարիչ Ճորճ Փաթթերի առաջարկած է 15 առ հարիւրով պակասեցնել պետութեան արուեստի յատկացումը պիւտճէն: Նիւ Եորքի բողոքաբարձ արդէն յայտարարած է արուեստներու յատկացումը պետական նպաստի կրճատում մը: Նիւ Եորքի մէջ արուեստի կարգ մը պատաս-

խանատուներու համաձայն, պետական նպաստի կրճատումը պատճառ կրնայ դառնալ Արուեստի Մեթրոփոլիթըն թանգարանին մէջ կարգ մը պատկերասրահներուն փակումներ: Ամերիկեան այլ թանգարան մը Քոլորադո մէջ՝ Ամերիքըն Միուզիմը մաֆ տը Մուլիինկ Իմէյճ պիտի ստիպուի իր դուները փակել շաբաթ երկու օր:

Այսօր արուեստներու յատկացումը պետական պիւտճէն չեստ ակելի ըրէ է, քան 4 տարի առաջ: 1993էն 2001 արուեստներու յատկացումը պետական պիւտճէն 211 միլիոն տոլարէն բարձրացած էր 446 միլիոն տոլարի: Սակայն Քացի համաձայն, նիւթական նպաստի կրճատումները չեն նշանակել, թէ պետութիւնը ճշտուողին պիտի հրաժարի արուեստներու մարզին զօրակցելէ:

«Արուեստի յատկացումը պետական պիւտճէն ջնջելը կամ գայն հիմնովին կրճատելը բնականէն դուրս միջոցառում մըն է», կ'ըսէ ան:

Սակայն Միացեալ Նահանգներու մէջ կը տիրէ այն մտաւախութիւնը, թէ նիւթական նպաստի կրճատումը ժխտական ազդեցութիւն պիտի ունենայ կրթական ծրագիրներու, արուեստի ձեռնարկներու, թանգարաններու եւ պատկերասրահներու վրայ:

«Ասիկա ոչ միայն պիտի անդամալուծէ արուեստները եւ անգործութիւն պիտի ստեղծէ այս տարեկանները մէջ, այլ նաեւ տագնապի պիտի մտնէ բազմաթիւ այլ ճարտարարուեստներ», կ'ըսէ Նիւ Ճորճիի մէջ արուեստներու հիմնարկի մը բանբերը:

Սեթըլի մէջ Հաստատուած ArtsJournal.com թերթին խմբագիրին համաձայն, արուեստներու յատկացումը պետական պիւտճէն կրճատումը խորհրդանշական աւելի մեծ աւել կրնայ գործել, քան՝ տոլարի դրամանիշին արժեզրկումը:

«Արուեստներու յատկացումը պետական պիւտճէն տակաւին աւելի բարձր է, քան 10 տարի առաջ: Այն մտայնութիւնը կը տիրէ, թէ պէտք է սրագրութիւն մը կատարել, որովհետեւ վերջին տասնամեակին պետական նպաստը ուժեղացած էր: Պետութիւնը այժմ ըսելի կ'ուզէ, թէ մշակույթը այլեւս այնքան կարեւորութիւն չի ներկայացնել իրեն համար, որ նիւթական նպաստ յատկացնէ»:

ՄԻՔԵԼԱՆՃԵԼՈՅԻ ԳԼՈՒԽ
ԳՈՐԾՈՅԸ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎՐԱՅ

ԿԱՏԻԿԱՆ ԿԸ ՄԱՏՈՒՅԵ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՔԿԱՆՔԸ ԱՌԹՈՂ ՇՐՋԱՊՏՈՅՑ
ՄԸ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ» ԵՒ «ՏԸ ԿԱՐՏԻՆ» ԿԸ ԳՐԵՆ.

Ջրօսաշրջիկներ իրենց կռնակին վրայ տապալած են Միսթինեան մատրան մարմարէ գետնին վրայ, երբ փորձած են տեսնել առաստաղին որմնանկարներուն իւրաքանչիւր մանրամասնութիւնը: Ասիկա չափազանցութիւն չէ...

Սակայն, մօտ օրէն արուեստի սիրահարներ իրենց համակարգիչին մուկին վրայ ճնշելով՝ պիտի կարենան մօտէն դիտել Միքելանճելոյի հռչակաւոր առաստաղը՝ Միսթինեան մատրան մէջ:

Վերածնունդի ժամանակաշրջանի գեղանկարչէր, որ կ'ըզէր միայն քանդակագործ ըլլալ, առաստաղը որմնանկարած է 1508էն 1512ի միջեւ անդուլ չախտելով: Այժմ առաստաղին որմնանկարները մաս կը կազմեն Վատիկանի թանգարաններուն մէջ իրականութեան խաբկանքը առթող շրջակայի վատիկանի համալսարանի կայքը (հասցէ՝ www.vatican.va):

Վատիկան, որ աշխարհի մէջ ամէնէն փոքր քաղաք - պետութիւնն է, կը գտնուի Իտալիոյ մայրաքաղաք Հռոմի սիրտին մէջ: Անիկա համացանցի իր կայքը ընդարձակած է՝ ամիսը 50 միլիոն այցելուներու թիւը բարձրացնելու նպատակով:

Կայքը մանրամասն տեղեկութիւններ կ'ընձեռնէ Վատիկանի պատկերասրահներուն եւ թանգարաններուն վերաբերեալ:

Իրականութեան խաբկանքը առթող այս շրջակայի կողքին՝ Վատիկան կը ծրագրէ նաեւ թանգարաններու եւ պատկերասրահներու մուտքի տոմսեր վաճառել համացանցի վրայ, որովհետեւ անոնք ժամանակը կ'երթի չսպասեն այս կառույցներուն մէջ: Նոյնիսկ կը մտածուի համացանցի վրայ յուշանուէրներ վաճառելու մասին:

Իրականութեան խաբկանքը առթող այս շրջակայի համար պատկերներ: Անոնց շարքին են Ադամի ստեղծումը՝ քրիստոնէական այն հռչակաւոր գեղանկարը, որուն մէջ Աստուած կը

ստեղծէ առաջին մարդը:

Միսթինեան մատրան առաստաղին որմնանկարներուն վերանորոգութիւնը աւարտեցաւ քանի մը տարի առաջ: Անիկա տեւեց 20 տարի: Յուլիոս Բ. պապը մատուցած պատկերազարդելու պատուէրը տուած էր Վերածնունդի ամէնէն հռչակաւոր գեղանկարիչին, որ երբեք չէ փափաքած ստանձնել գործը:

Միքելանճելո իր փառահեղ յղացքը իրագործած է յատկապէս այս նպատակին ծառայող աստիճան մը բարձրանալով եւ իր կռնակին վրայ պառկած գծելով: Կ'ըսուի, թէ անոր օգնականները երեկոյան վրձինները զօրով կը խլէին անոր պրկուած մատներէն:


Իրականութեան խաբկանքը առթող շրջակայ տարին մաս կը կազմէն նաեւ Վատիկանի էթրիւքեան եւ եզրպատկան թանգարանները, Ռաֆայէլի պատկերասրահները եւ Փինաթթեքան, որ Վատիկանի ամէնէն հռչակաւոր արուեստի պատկերասրահն է:

Միքելանճելո կատարող անձ մըն էր: Մանրավէպի մը համաձայն, ան նախախտ օգնական մը զամած է տախտակին, ուսումնասիրելու համար խաչելութեան տեսարանի մը մարդակազմութեան մանրամասնութիւնները, եւ յաճախ պնդած է, թէ իր յարմարագոյն գործիքը քանդակի մուրճն է: Ան հանդիպած է նոյնքան տիրական նկարագիրով անձի մը՝ Յուլիոս Բ. պապին, որ իրեն հրահանգած է Հռոմի մէջ քանդակել քրիստոնէական աշխարհի ամէնէն փառահեղ քանդակագրող դամբարանը: Միքելանճելո յաճախ յետաձգած է այս աշխատանքը, որովհետեւ կլանուած է Միսթինեան մատրան առաստաղը գծելով:

(ՀԱՄԱԿՐԱՐԱՐՈՒՄ)
Պատրաստեց՝
Լ. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀ



ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔ
ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՅ ՀԵՆՄԱՆԸ



Անտրե Ակասի

Մոնթեալի մէջ (Քանատա) տեղի ունեցող թեւիսի տղոց միջազգային մրցաշարքին Բ. հանգրուանին իր կատարած մրցումին, արժանութիւնահայ Գաւիթ Նալպանտեան արժանազան հանգիստ յաղթանակ մը 6 - 4 եւ 6 - 4 արդիւնքով պարտութեան մատնելով բրիտանացի իր մրցակիցը՝ Թիմ Հենմանը:

Մրցաշարքին թիւ 1 դասուած աներկկացի Անտրե Ակասի իր կարգին ապահովեց Գ. հանգրուանին իր տոմար 7 - 6 եւ 6 - 2 արդիւնքով պարտութեան մատնելով ռուս Նիքոլայ Տալիտենքոն:

Ստորեւ Բ. հանգրուանին մնացեալ կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները.
Խուան Բարլոս Զերեթո (Սպանիա, 2րդ) - Եռնէս Այնաուի (Մարոք) 6 - 3 եւ 6 - 4
Ռոմէ Զետերեր (Չուիցերիա, 3րդ) - Կրէկ Ռուստաքի (Քրիտանիա) 6 - 4 եւ 6 - 3
Մաքս Միրնիյ (Պիլիպիններ) - Լէյթըն Հուրիթ (Աւստրալիա, 5րդ) 7 - 5, 6 - 7 եւ 7 - 5
Ռայնըր Շուրթլի (Գերմանիա, 8րդ) - Եւգենի Բաճեկիճի (Ռուսիա) 6 - 1 եւ 6 - 4
Սեպասթիան Կրոման (Յրանսա, 9րդ) - Ռամոն Տեկատո (Փարակուէյ) 6 - 3 եւ 6 - 2

«ԻՆԹԵՐՆԱՏԻՆԱԿԱՆ» Ի ԱՒԱՐՏԱԿԱՆԸ՝ ԾԱԼԳԵՒ ԵՒ ՓԱՍՇԻՆԿԻ ՄԻՋԵՒ

«Ինտերնաթ» ֆութբոլի մրցաշարքի կիսաարտական հանգրուանի դարձի մրցումներուն, Շալքէ թէւ ապահովեց արտական հանգրուանին իր տոմար, սակայն անիկա Եու. Է. Է. Ֆ. Ա. ին տոմար ապահովելու համար կրնայ դժուարութիւններու հանդիպիլ, նկատի ունենալով, որ պիտի ձախարհ վերտրը Պրեմիեր լիգայի ձգած արտական Փասշինկ խումբին դէմ:

Ստորեւ կիսաարտական հանգրուանի դարձի մրցումներուն արդիւնքները (փակագիծին մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները, իսկ գլխագիրով նշուած խումբերը կ'անցնին յաջորդ հանգրուան):

- Քոփըր (Սլովակիա) - ՀԻՐԵՆՎԻՆ (Հոլանտա) 1 - 0 (0 - 2)
ՎՈԼՅՄՊՈՒՐԿ (Գերմանիա) - Սիպալիա (Խրուաթիա) 4 - 0 (4 - 1)
Վերտըր Պրեմըն (Գերմանիա) - ՓԱՍՇԻՆԿ (Աւստրիա) 1 - 1 (0 - 4)
Սլովակի Լիպերէք (Չեխիա) - ՇԱԼԳԷ (Գերմանիա) 0 - 0 (1 - 2)
ՓԵՐՈՒՃԻՍ (Իտալիա) - Նանթ (Յրանսա) 0 - 0 (1 - 0)
ՎԻՍՐԷԱ (Սպանիա) - Պնո (Չեխիա) 2 - 0 (1 - 1)

Ստորեւ արտական հանգրուանի մրցումներուն յայտագիրը (երթի մրցումները տեղի պիտի ունենան Օգոստոս 12ին, իսկ դարձի մրցումները Օգոստոս 26ին):
Փասշինկ (Աւստրիա) - Շալքէ (Գերմանիա)
Փերուճիա (Իտալիա) - Վոլֆսպուրկ (Գերմանիա)
Հիրենվիլին (Հոլանտա) - Վիպրայ (Սպանիա)

ՅՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՒՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՈՐ՝ ՄԱՐՍԷՅ - ՕՔՍԷՌ

Յրանսայի ֆութբոլի ախոյեանութեան 2րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր տեղի կ'ունենայ Մարսէյ - Օքսէր ճակատումը՝ առաջինին դաշտին՝ «Վելոտրոմ»-ի մէջ, ժամը 21:45ին (Պէյրոթի ժամով): Մնացեալ ութ ճակատումները տեղի կ'ունենան վաղը՝ Շաբաթ:

Եղանակի իր կատարած առաջին մրցումին, Մարսէյ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Կենկանը, մինչ Օքսէր իր դաշտին վրայ պարտուեցաւ Նիսէն (2 - 1):

Մարսէյ, որ եղանակի իր առաջին մրցումը պիտի կատարէ իր դաշտին մէջ, յոյսով է, որ վաթսուն հազար իր համակիրները անպայման գոհ պիտի ձգէ, մանաւանդ, որ անոնք իրենց կայմէն կ'ակնկալեն յաւ արդիւնքներ՝ այս եղանակին:

Թէեւ Մարսէյի նորեկ մարզիկ՝ Յիլիփ Քրիսթանվալ վիրաւոր ըլլալով դաշտ պիտի չներկայանայ, սակայն սենեկայցի յետասպահ Հապիպ Պէյէ, որ Սթրասպուրկէն միացաւ Մարսէյի, դաշտ պիտի ներկայանայ: 26 տարեկան Պէյէ, որ երեք տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց, իրաւունք պիտի ունենայ նաեւ իր մասնակցութիւնը բերելու «Չէմփիրնի Լիկ»-ի ֆութբոլի մրցաշարքին:

Օքսէրի մարզիչ Կի Ռու, մրցումին նախօրեակին կը մնայ լաւատես, թէեւ անոր կայմէն պիտի բացակայի սենեկայցի Ամոնի Ֆայէ (փոխանցուած՝ Փորթսմութի):

Ստորեւ՝ Բ. հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրոթի ժամանակացոյցով):


Table with 2 columns: Match details and time. Includes matches like Մարսէյ - Օքսէր (21:45ին), ՎԱՂԸ (18:15ին), Լիլ - Փարիզ Սէն Ժերմէն (21:00ին), Լը Մանս - Ամաքսիօ (21:00ին), Պորտո - Մոնպելիէ (21:00ին), Լիոն - Մոնաքո (21:00ին), Սթրասպուրկ - Կենկան (21:00ին), Պասթիա - Մէս (21:00ին), Նիս - Սոչո (21:00ին), Ռենն - Թուլուզ (21:00ին)



Հապիպ Պէյէ

ՊԵՔԸՆՊԱՌԻԸՐ Զ՛ՈՒՉԵՐ ՊԱՅԵՐՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՁԵԱԼ ՎԱՐԵԼ

Պայէրն Միւնիխի նախագահ Յրանց Պեքընպաուրը կը մտադրէ յառաջիկայ Նոյեմբերին տեղի ունենալիք նախագահի ընտրութեան արշաւին մէջ չմտնել, որովհետեւ չ'ուզէր յաւելեալ երեք տարի եւս այդ պաշտօնը վարել, նկատի ունենալով որ իր դիմաց ունի այլ մարտահրաւեր մը՝ լաւապէս յաջողցնել 2006ի Մոնտիալը, որ տեղի պիտի ունենայ Գերմանիոյ մէջ:



Յրանց Պեքընպաուրը

57 տարեկան Պեքընպաուրը, որ 2006ի Մոնտիալի կայմակերպիչ յանձնախումբին նախագահն է, 1994էն ի վեր կը վարէ Պայէրնի նախագահի պաշտօնը: Ան չի փափաքիր չորրորդ նստաշրջանի մը համար դարձեալ վերընտրուիլ, թէեւ այդ ուղղութեամբ ցարդ պաշտօնապէս ոչինչ կը յայտարարուի:

ՅՍԱԿԱՑԱՆ «ՉԵՄՓԻԸՆՉ ԼԻԿ»-Ի Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ

«Չէմփիրնի Լիկ»-ի ֆութբոլի մրցաշարքին 4-րդ հանգրուանի դարձի մրցումներէն ետք, յաւակացան Գ. հանգրուանին իրենց տոմար ապահովող 14 խումբերուն անունները, որոնք այսպիսով կը միանան այն 18 խումբերուն, որոնք մրցաշարքը կը սկսին Գ. հանգրուանէն: Պէտք է նշել, որ Գ. հանգրուանի մրցումները, որոնք տեղի պիտի ունենան 32 խումբերու միջեւ, պիտի ըլլան աւելի հետաքրքրական, նկատի ունենալով կարգ մը պորտուր խումբերու ներկայութիւնը, որոնց կարգին Մարսէյ, Պորտուիս Տորթմուտ, Լաքո Ռոմա, Տեփորթիօ Քորնուս, Չելսի, Սելթա Վիլո, Նիքէրլ, Այաքս Ամսթերտամ եւ Երիւնքեր:

Ստորեւ՝ Բ. հանգրուանի դարձի մրցումներուն անբողջական արդիւնքները (գլխագիրով նշուած խումբերը կը հասնին Գ. հանգրուան, մինչ փակագիծին մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները):

- ՍԵԼԹԻԸ (Սկոտլանդ) - Զաուցաս (Լիթվանիա) 1-0 (4-0)
Ուանտորրըրգ (Սալթա) - ԸՈՓԵՆԸԱԿԸՆ (Դաւիա) 0-6 (1-4)
ՏԻՆԱՄՕ ՋԱՂԸՊ (Խրուաթիա) - Մարիպոր (Սլովակիա) 2-1 (1-1)
ԿՐԱՅ (Աւստրիա) - Թիրաւա (Ալպանիա) 2-1 (5-1)
Տիւրկարտըն (Շուէտ) - ՓԱՐԹԻՋԱՆ ՊԵԼԿԱՍ (Սերբիա) 2-2 (1-1)
ՌՈՋԵԼՊՈՐԿ (Նորվեգիա) - Պոհեմիանս (Ալի) 4-0 (1-0)
ԱՆՏՐԸԼԵՄ (Պելճիք) - Ռափիտ Պուրթէ (Ռումանիա) 3-2 (0-0)
ՇԵԼՍԻՆԸԻ (Ֆիլիպին) - Պուտափէշտ (Հունգարիա) 1-0 (2-2)
ՍՈՖԻԱՅԻ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐ (Պուկարիա) - Փիւնիկ Երեւան (Հայաստան) 1-0 (2-0)
ԱՆԻՒՍ ՓՐԱԿԱ (Չեխիա) - Լեոթար (Ռումանիա) 2-0 (2-1)
Օմոնիա Նիկոսիա (Կիպրոս) - ՎԻՍՍԱ ԸՐԱԸՈՎ (Լեհաստան) 2-2 (2-5)
ՎԱՐՏԱՐ (Մակեդոնիա) - Մոսկուայի Բանակայիցներ (Ռուսիա) 1-1 (1-0)
ՇԱԽԹԱՐ ՏՈՆԵԹՅԸ (Ուրուգուայ) - Շերիֆ Թիրաուլ (Սլովակիա) 2-0 (0-0)
Մաքապի Թէլ Աւի (Իսրայէլ) - ՋԻԼԻՆԱ (Սլովակիա) 1-1 (0-1)
Ստորեւ Գ. հանգրուանի մրցումներուն յայտագիրը (երթի մրցումները տեղի պիտի ունենան Օգոստոս 12ին եւ 13ին, իսկ դարձի մրցումները՝ Օգոստոս 26ին եւ 27ին):

Վարտար (Մակեդոնիա) - Սփարթա Փրակա (Չեխիա)

Պուտափէշտ (Հունգարիա) - Սելթիք (Սկոտլանդ)
Ռէյնալդ (Սկոտլանդ) - Քոփենհակըն (Դանիա)
Աւստրիա Վիեննա (Աւստրիա) - Մարսէյ (Յրանսա)

Ֆ. Ք. Պրիմ (Պելճիք) - Պորտուիս Տորթմուտ (Գերմանիա)

Շախար Տոնթըր (Ուրուգուայ) - Լոքոմոթիվ Մոսկուա (Ռուսիա)

Լաքո Ռոմա (Իտալիա) - Պենֆիլդ (Փորթուգալ)
Տիւսաօ Քիւ (Ուրուգուայ) - Տիւսաօ Չաղթէպ (Խրուաթիա)

Ռոպէնպուրկ (Նորվեգիա) - Տեփորթիօ Քորնուս (Սպանիա)

Կրասնոփրոկ Յիրիխ (Չուիցերիա) - ԱԷՔ Արթըր (Յունաստան)

Չիլիինիա (Սլովակիա) - Չելսի (Անգլիա)
Սելթա Վիլո (Սպանիա) - Սլաւիա Փրակա (Չեխիա)

Փարթիպան Պելկրատ (Սերբիա) - Նիքէրլ (Անգլիա)

Կայաթասարայ (Թուրքիա) - Սոֆիայի Բանակայիներ (Պուկարիա)
Անտրլիէխթ (Պելճիք) - Վիլյա Բրաքով (Լեհաստան)

Կրաց (Աւստրիա) - Այաքս Ամսթերտամ (Հոլանտա)

Հ.Յ.Դ. «ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ» ԱԿՈՒՄԲԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ՝ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ



Մարալ Չոլոյեան



Սեդա Խորջեան



Յոզէֆ Բէչէպաշեան



Հրայր Գեորգեան



Գեղամ եպս. Ռաչերեան

խանութիւնները՝ «Գարեգին Նժդէհ» ակումբը հաստատելու, ապա՝ պայմանաւորաբար եւ ընդարձակելու: Այս ակումբը հայութեան հասնող ձեռքը եղաւ պատերազմի դաժան տարիներուն, եղաւ անոր նեցուկն ու յոյսը,

ապահովութիւն եւ քաջութիւն ներշնչողը, պայն մնալուն կերպով իր շուրջ համախմբած տունը, նշեց Մ. Չոլոյեան: Իր խօսքին արարտին ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնե-

ցան ակումբին եւ հաստատեց, թէ այս կառոյցը պիտի ըլլայ այն կեդրոնը, որ իր շուրջ պիտի համախմբէ ծերն ու երիտասարդը եւ անոր յարկին տակէն դուրս պիտի գան հայութեան վաղուան դեկլարաններն ու գործիչները:

ԼՕԽԻ, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հասնապայինի անունով խօսք առաւ ԼՕԽԻ Շրջանային Վարչութեան ատենապետ Աեդա Խորջեան, որ նշեց, թէ իւրաքանչիւր իրագործում առիթ կու տայ հպարտութեան, հայութեան ուժերուն նկատմամբ ինքնավստ-

տահութեան եւ հաւատքի եւ կը հանդիսանայ յոյս մը դէպի ապագայ: Ան ըսաւ, թէ նման իրագործումներն աւել անհատը կը մղեն խորհրդածելու հաստատուած կառոյցի առաքելութեան եւ գործունէութեան շուրջ: Ակումբին վե-

րանորոգութիւնը եւ ընդարձակումը բնական գոհացում են օրւան պահանջներուն եւ պարգաւներուն, ըսաւ Մ. Խորջեան, սակայն քարեղէն կառոյցները ոչինչ կը ծառայեն եթէ անոնք չթողնան պատանին եւ երիտասարդնե-

րու ճիշդով, չհինսան ու չմաշին անոնց աշխատանքներով եւ ետուպեղով: Ան անդէս պարզաբանութեամբ արարաւ այն սպառնալիքին, որուն ենթակայ են ժողովուրդները՝ համաշխարհայնացման այս դարուն, Շարը՝ էջ 10

